Ինչպես սկսել և զարգացնել հավկիթի արտադրության սեփական բիզնեսը

Հավկիթը պատկանում է առավել պահանջված և անփոխարինելի սննդամթերքների շարքին: Այն սպիտակուցի հիմնական աղբյուրներից մեկն է, պարունակում է սննդարար նյութեր, մեծ քանակությամբ արժեքավոր միկրոտարրեր և 12 տեսակի վիտամիններ: Այն յուրացվում է օրգանիզմի կողմից 97 %-ով: Հավկիթն օգտագործվում է ավանդական բազմաթիվ ճաշատեսակների պատրաստման համար, ինչպես նաև անփոխարինելի մթերք է դիետիկ և սպորտային սննդի համար: Հավկիթի արտադրությունը հնարավոր է կազմակերպել նույնիսկ գյուղական փոքրիկ թռչնաֆաբրիկայում կամ սեփական տնտեսությունում: Հավկիթի իրացման խնդիր երբևէ չի ծագում, քանի որ դրա պահանջարկը միշտ բարձր է (նույնիսկ մշտապես աճող գների դեպքում): Այնուամենայնիվ, նման բիզնես հիմնելու համար պահանջվում են նախնական ներդրումներ: Փոխհատուցվելիության ժամկետը բավական կարճ է (մոտ վեց ամիս): Սեփական ֆերմայի կազմակերպումը՝ ձվատու հավեր պահելը և հավկիթի արտադրությամբ զբաղվելը բավականին շահավետ բիզնես է: Որոշ տվյալների համաձայն, հավկիթի արտադրության եկամտաբերությունը հասնում է 80 – 100 %–ի: Տնական հավկիթի պահանջարկը միշտ եղել և մնում է բարձր:

Այնուամենայնիվ, հավկիթի արտադրությունն, ինչպես ցանկացած այլ գյուղատնտեսական գործունեություն, ունի իր դժվարությունները: Ահա մի քանի խորհուրդ այն մարդկանց, որոնք որոշել են զբաղվել հավկիթի արտադրությամբ և վաճառքով:

Հավկիթի արտադրությունը շահութաբեր է՝ անկախ քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակներից:

Ինչպես հայտնի է, տնական հավկիթների գինն ու պահանջարկը, թռչնաբուծական ֆաբրիկայում արտադրված հավկիթների համեմատ, շատ ավելի բարձր են, քանի որ տնական հավկիթը բնական արտադրանք է:

Որո՞նք են տնական հավկիթի առավելությունները

- Տնական հավկիթը շատ ավելի համեղ է:
- Պարունակում է մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ և օգտակար բնական սննդանյութեր, մինչդեռ թռչնաֆաբրիկայում արտադրված հավկիթը կարող է պարունակել մեծ քանակությամբ հորմոններ: Ուստի միայն տնական հավկիթը պետք է ընդգրկվի դիետիկ կամ մանկական սննդակարգում:
- Տնական հավկիթի դեղնուցը վառ նարնջագույն է, որը կախված է ընդունած սննդից, օրինակ, գարնանը, երբ հավերը թարմ խոտով են սնվում, հավկիթի դեղնուցը լինում է ավելի մուգ գույնի, քան ձմռանը: Թռչնաբուծական ֆաբրիկայում արտադրված հավկիթի դեղնուցը համարյա միշտ գունատ է:
- Տնական հավկիթը մեկուկեսից երկու անգամ ավելի թանկ արժե, քան թռչնաբուծական ֆաբրիկայում արտադրվածը:

Ինչի՞ց սկսել հավկիթի արտադրության բիզնեսը

Հավկիթի արտադրության բիզնեսի առավելությունն այն է, որ այն կարող եք հիմնել ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում: Բացի այդ, հավկիթի պահանջարկը միշտ կա՝ անկախ սեզոնից կամ տնտեսական ճգնաժամից: Այս բիզնեսի միակ թերությունը մրցակցությունն է: Հետևաբար, լավ կլինի սկսեք շուկայի վերլուծությունից, այնուհետև գտնեք այն վայրը, որն առավել հարմար կլինի թռչնաբուծական ֆերմա հիմնելու համար: Բիզնեսի գրանցումից և անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումից հետո հարկավոր է իրականացնել՝

- շինության կառուցում կամ վերակառուցում,
- սարքավորումների և կերերի ձեռքբերում,
- գնորդների որոնում,
- թռչնաֆաբրիկայի բացում,
- գովազդային արշավ:



Որքա՞ն գումար է հարկավոր հավկիթի արտադրության բիզնեսը սկսելու համար

Բիզնեսի կազմակերպման համար անհրաժեշտ է կահավորել հավաբունը, գնել ճտեր և մեծացնել դրանք մինչև 18 շաբաթական (4,5 ամսական) դառնալը կամ գնել արդեն երիտասարդ հավեր: Սկզբի համար 100 հավ ունենալը բավարար է: Եթե հասուն հավի գինը 1300-2500 դրամ է, ապա 100 հավի համար կպահանջվի 100 թռչուն x (1300) 2500 դրամ =(130 000) **250 000** դրամ: Անհրաժեշտ է հաշվել 1 ամսվա համար պահանջվող կերի քանակը և ծախսը: Եթե 1 հասուն հավն օրական ուտում է 120 գ կեր, իսկ 1 կգ համակցված կերի արժեքը կազմում է 220 դրամ, ապա կպահանջվի 0,12 կգ x 100 թռչուն x 30 օր x 220 դրամ = **79200** դրամ: Այս երկու գումարները (250 000 + 79 200 = **329 200**) նախնական ներդրումների հիմնական մասն են կազմում:

Բիզնեսի արդյունավետությունը հաշվարկելու համար անհրաժեշտ է համեմատել արտադրության վրա կատարված ծախսերը և ստացված եկամուտը:

Բիզնես պլանի մոտավոր հաշվարկ



Նշանակում է, 1 հավ պահելու համար ամսական ծախսվում է 3,6 կգ x 220 դրամ = **792** դրամ:

Հավկիթի ինքնարժեքի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ՝

- կերային բազայի ծախսը,
- էլեկտրական հոսանքի ծախսը,
- օգտագործված ջրի ծախսը,
- արտադրված հավկիթը վաճառակետ (շուկա, խանութ) տեղափոխելու ծախսը,
- հավկիթի տարայի ձեռքբերման և տարայի պիտակավորման ծախսը,
- հավերի պատվաստման և բուժման ծախսը:

Ինքնարժեքը պայմանական է, քանի որ որևէ գործոնի արժեքի փոփոխությունը կարող է հանգեցնել ինքնարժեքի համապատասխան փոփոխությանը:

1 հավից ստացվող ենթադրյալ եկամուտը

- 1 ամսում արտադրվում է 15-25 հավկիթ:
- 1 հավկիթի արժեքը 60-70 դրամ է:
- 1 ամսում ստացված եկամուտը կազմում է 900-1750 դրամ (15 հավկիթ x 60 դրամ = 900 դրամ; 25 հավկիթ x 70 դրամ = 1750 դրամ):

Հասկանալու համար, թե որքանո՞վ է ձեռնտու բիզնեսի այս տեսակը, պարզենք, թե անհատ ձեռներեցը որքա՞ն եկամուտ կարող է ստանալ սեփական արտադրության հավկիթների վաճառքից:

Մաքուր եկամուտ

Եկամուտ ստանալու համար պետք է հաշվի առնել ծախսերը և վաճառել ինքնարժեքից ոչ ցածր գնով՝ **ինքնարժեք + ինքնարժեքի 20 % = վաճառքի փաստացի գին**:
Անհրաժեշտ է այնպես անել, որ եկամուտն ապահովվի ողջ տարվա ընթացքում:
Հավի ձվատվությունը հատկապես բարձր է լինում 1-1,5 տարեկան հասակում, որից հետո այն սկսում է նվազել: Հետևաբար, հին սերնդի հավերին փոխարինելու համար պետք է ունենալ նոր սերնդի հավեր, այսինքն՝ պետք է հավերին թուխս նստեցնել: Մայր հավին իր ճուտիկների հետ հարկավոր է պահել առանձին:
Պետք է հիշել, որ ցանկացած բիզնես, մասնավորապես՝ հավաբուծությունը, ենթադրում է ռիսկեր, օրինակ՝ թռչնի գրիպ, տարատեսակ վարակիչ հիվանդություններ, որոնց առաջացման պատճառներից են թռչնաղբը ժամանակին չհեռացնելը, հիվանդ հավին չմեկուսացնելը, պատվաստման ժամկետը բաց թողնելը կամ ուշացումը, հավին վատորակ սնունդ կամ ջուր տալը: Ռիսկային այս գործոններն անտեսելու դեպքում, հավերի գլխաքանակը կտրուկ կարող է նվազել կամ հավասարվել զրոյի:

Տարվա ո՞ր եղանակն է առավել հարմար բիզնեսը սկսելու համար

Հավաբուծության բիզնեսը ցանկալի է սկսել գարնանը, քանի որ այդ ժամանակահատվածն ամենաարդյունավետն է ֆերմերի պահանջները բավարարելու առումով: Այս ժամանակ էլեկտրական հոսանքի ծախսերը հասնում են նվազագույն չափի (հավաբունը չի ջեռուցվում, հավերը ժամանակի մեծ մասն անցկացնում են զբոսաբակում և հավելյալ օդափոխության կարիք չի լինում): Բացի այդ, հավերը բաց տարածքում կարողանում են սնվել կանաչ խոտով և որդերով: Ինչպես հայտնի է, հավերի խնամքն այնքան էլ բարդ չէ, պահպանման համար պահանջվում է փոքր տարածք (1 մեկ թռչնի համար հավաբնում պահանջվող տարածքը 0,25 մ^2 է, իսկ զբոսաբակի համար պահանջվում է 8 անգամ ավել տարածք՝ 2 մ^2):

Ձվատու հավերի հավաբնի առանձնահատկությունները

Կարևոր պայմաններից են հավաբնի լուսային և ջերմային ռեժիմը և օդափոխությունը:

Հիշե՛ք, որ ձվարտադրության բարձր ցուցանիշներ ապահովելու համար կարևոր է հավաբնի ներսում ջերմության ապահովումը: Հավը դադարում է ձու ածել, երբ հավաբնի ջերմաստիճանը 12°C-ից ցածր է:

Հավաբնի պատերը պետք է ջերմամեկուսացնել, իսկ ձմռան ամիսներին հավաբունը պետք է ջեռուցվի ջեռուցման սարքավորումների կամ կարմիր լամպերի միջոցով: Վերջիններս արտադրում են ինֆրակարմիր ճառագայթներ, որոնք տաքացնում են ճառագայթվող մակերեսները, և ոչ թե օդը, և նպաստում են ձվարտադրությանը:

Հավաբունը հարկավոր է լավ օդափոխել: Հավին անհրաժեշտ է մինչև 10 մ^3/ժ մաքուր օդ: Դա կարող եք ապահովել օդափոխչի միջոցով:

Թռչնաբուծությամբ զբաղվող կին ֆերմերի հաջողված փորձ

Գարնանը ձեռք բերված տասը հավից ստացված հավկիթները սկզբնական շրջանում վաճառել է հարևաններին, այնուհետև վաճառքից ստացված գումարով ձեռք է բերել 50 ձվատու հավ: Դա նպաստել է հավկիթների քանակի ավելացմանը և վաճառքի ընդլայնմանը: Հավելյալ եկամուտն օգտագործվել է ձվատու հավեր ձեռք բերելու համար՝ դրանց թիվը 50-ից հասցնելով 200-ի: Արտադրված հավկիթների վաճառքի համար կապ է հաստատել մեծածախ շուկայի սպառողի հետ:

Կին ֆերմերը հավերի խնամքը (կերակրում, ջրի խմեցում, հավաբնի մաքրում) իրականացրել է օրական 3 անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան:

Կերակրման, ջուր խմեցնելու, հավաբնի մաքրման աշխատանքներ

Հավի կերաբաժինը հիմնականում ներառում է՝ համակցված կեր, խոտ, ծղոտ, հացահատիկային թափոններ, խաշած կարտոֆիլ, ինչպես նաև կավիճ, մանրախիճ և ածուխ (վիտամիններ և կալցիում): Կերերի ողջ տեսականին կարելի է ձեռք է բերել տեղական գյուղարտադրողների կողմից: Մեկ ձվատու հավի կերի ծախսն ամսական միջինում կազմում է մոտ 800 դրամ (ամսական 20 հավկիթի արտադրության պարագայում՝ **20 հավկիթ x 70 դրամ = 1400 դրամ)**:

Ձվարտադրության կարևոր գործոնը լավորակ կերն է: Բաց տարածքում արածելու ժամանակ թռչունը սնվում է բուսական և կենդանական կերով, որը փոխարինում է հացահատիկի և համակցված կերի որոշակի քանակին:

Ռացիոնալ կերի շնորհիվ կարելի է ապահովել ձվարտադրությունը ողջ տարվա ընթացքում:
Հավի կերն ինքնուրույն պատրաստելու դեպքում, կունենաք 30-50% խնայողություն:

Ճտերի և ձվատու հավերի կերակրման համար պատրաստվող համակցված կերի հիմնական բաղադրիչներն են՝ եգիպտացորենը, ցորենը, արևածաղկի քուսպը, հանքային և վիտամինային հավելումները:

Համակցված կերի բաղադրատոմսեր

Ձվատու հավերի համար համակցված կեր կարող եք պատրաստել նաև ինքներդ: Պարզապես Ձեզ հարկավոր է հացահատիկի ջարդիչ, որը կարող եք ձեռք բերել խանութից կամ առցանց վաճառքի միջոցով, ինչպես նաև բաղադրատոմսեր, կշեռք, խառնիչ և մեծ տարա:
Ստորև ներկայացված են ձվատու հավերի համակցված կերի բաղադրատոմսերից մի քանիսը:

I. Ցորեն՝ 62,5%
Արևաածաղկի շրոտ (աղացած քուսպ)՝ 17,5%
Հանգած կրի փոշի՝ 7,5%
Ոսկրալյուր՝ 4,0%
Կերի խմորիչ՝ 2,5%
Արևաածաղկի ձեթ՝ 2,3%
Կերակրի սոդա՝ 0,07%
Կերակրի աղ՝ 0,1%
Հանքային և վիտամինային հավելումներ

II. Եգիպտացորեն՝ 45%
Ցորեն՝ 12%
Գարի՝ 12%
Ոլոռ՝ 7%
Արևաածաղկի քուսպ՝ 7%
Վիտամինային խոտի ալյուր՝ 2%
Կերակրի աղ՝ 0,1%
Վիտամիններ, միներալներ կամ «Պրեմիքս» հավելում

III. Ցորեն՝ 22,5%
Գարի՝ 15%
Ցորենի թեփ, արևաածաղկի քուսպ՝ 17,5%.
Կորեկ՝ 14%
Վիտամինային խոտի ալյուր՝ 5%
Ձկնալյուր՝ 3,5%
Ոսկրալյուր՝ 3,5%
Կերի խմորիչ՝ 2%
Խեցի՝ 3%
Կերակրի աղ 0,1%

Սրանք համակցված կերի փորձարկված բաղադրատոմսեր են:

Բոլոր բաղադրիչները, հատկապես՝ «Պրեմիքս» հավելումը հարկավոր է մանրակրկիտ կերպով խառնել:

Ձվատու հավի համակցված կերի բոլոր բաղադրիչները սկզբում մանրացվում են առանձին – առանձին, այնուհետև խառնվում են բաղադրատոմսում նշված չափաբաժնով:

Համակցված կերի բաղադրությունը կարող եք փոխել Ձեր հայեցողությամբ, սակայն ավելի լավ է հետևել բաղադրատոմսին:

Խառնուրդի համար նախատեսված «Պրեմիքս» հավելումն ավելացնելիս, ուշադիր հետևե՛ք օգտագործման հրահանգներին: Նշված չափաբաժինը գերազանցելու դեպքում, հավերի մոտ կարող են զարգանալ հիվանդություններ, մասնավորապես՝ լյարդի ախտահարում, նաև չի բացառվում, որ հավը սատկի:

Բացի այդ, «Պրեմիքս» գնելիս, ուշադրություն դարձրե՛ք պիտանելիության ժամկետին:

Ձվատու հավին անհրաժեշտ է միջինում 120 գ համակցված կեր, որը կարելի է տալ չոր կամ ջրի հետ խառնած վիճակում:
Մի՛ մոռացեք ձվատու հավերին, բացի համակցված կերից, տալ **չջարդված** հացահատիկ և կանաչ կեր:

Հավերին պետք է ապահովել խմելու մաքուր ջրով: Ամռան ամիսներին խմելու ջրի պահանջարկը մեծանում է: Խմելու ջուրը հարկավոր է հաճախակի փոխել, որպեսզի այն միշտ սառը լինի:

Սառը ջուրը նպաստում է հավերի մարմնի ջերմաստիճանի իջեցմանը: Հավաբնի տհաճ հոտը վերացնելու համար, հավաբունն անհրաժեշտ է մաքրել օրական 3 անգամ, այսինքն՝ յուրաքանչյուր կերակրումից հետո:

Հավկիթի իրացում

Ոչ մի արտադրանք չի կարող շահութաբեր լինել՝ առանց ապրանքի իրացման հարցի կարգավորման: Գործարար մարդկանց կարծիքով, տնական հավկիթի պահանջարկը միշտ բարձր է:

Պետք է անընդհատ փնտրել հավկիթի հանձնման կամ վաճառքի կետեր և լավորակ կերի բազա:

Հիմնական իրացման վայրը շուկան է: Մեծածախ առևտրի կետերի միջոցով իրացումից բացի, հավաբուծությամբ զբաղվող կանայք կարող են անձամբ իրականացնել հավկիթի վաճառքը:

Ֆերմերը շուկայում մեկ օրում կարող է վաճառել մոտ 200-300 տնական հավկիթ: Հիմնական գնորդները մշտական հաճախորդներն են, որոնք նախապատվությունը տալիս են տնական հավկիթին:

Խոշոր արտադրողների մրցակցությունից չպետք է վախենալ, քանի որ նրանց մեծ մասն իրենց արտադրանքը հանձնում են սուպերմարկետներին:

Հիշե՛ք՝ ամռանը հավկիթի պահանջարկն ու գինը նվազում են:

Վաճառքի ժամանակ, որպես մարքեթինգային քայլ, գնորդին տեղեկացրե՛ք սեփական հավերի կերաբաժնի առավելությունների մասին: Դա կխթանի գնորդի ցանկությունը, որպեսզի նա ձեռք բերի հենց Ձեր տնական արտադրության հավկիթները: Կարելի է նաև վաճառակետում տեղադրել փոքրիկ տեղեկատվություն այն մասին, որ հավկիթները պարունակում են տարբեր վիտամիններ:

Վաճառքի ընդլայնմանը նպաստող պայմաններից է նաև հավկիթների փաթեթավորումն ու պիտակավորումը: Պիտակավորումը սպառողներին հնարավորություն է տալիս ճանաչել իր նախընտրած արտադրողին և լավորակ հավկիթը:

Ո՞ր հարկային համակարգն ընտրել հավաբուծական ֆերմայի համար

Ինչ վերաբերում է ձեռնարկատիրության գրանցմանը, ապա պետք է նշել, որ արտադրության փոքր ծավալների դեպքում գործունեության գրանցումը պարտադիր չէ: Սեփական օժանդակ տնտեսության արտադրանքի իրացման համար բիզնեսի գրանցման ընթացակարգ չի պահանջվում: Այնուամենայնիվ, եթե ծրագրում եք հանձնել Ձեր արտադրանքը մանրածախ առևտրի կետերին, իսկ Դուք դա անպայմանան կցանկանաք կատարել, երբ արտադրության ծավալները մեծանան, ապա այդ դեպքում անհատական ձեռնարկատիրության գրանցումը պարտադիր է:

Հավկիթի պիտանելիության ժամկետը

Բիզնեսի զարգացման համար կարևոր նախապայման է արտադրված հավկիթների պահման և սպառման կետի առկայությունը:
Հավկիթի պահման ժամկետը կախված է օդի ջերմաստիճանից:
Սենյակային ջերմաստիճանում (22°C) հավկիթը կարելի է պահել 10-12 օր, իսկ սառնարանում (5-8°C)՝ մոտ 1 ամիս:

Վաճառքի համար ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում

Հավկիթն արագ փչացող սննդամթերք է, ուստի ենթակա է պետական վերահսկողության մարմինների, մասնավորապես՝ սանիտարական և անասնաբուժական ծառայությունների կողմից վերահսկման: Շուկայում յուրաքանչյուր վաճառքից առաջ հավկիթի նմուշները հանձնվում են հետազոտման՝ տեղական անասնաբուժական վերահսկողության լաբորատորիայում, և ձեռք է բերվում արտադրանքի որակը հաստատող փաստաթուղթ:



Ինչպե՞ս ստուգել հավկիթի թարմությունը՝ մեկ բաժակ ջրի օգնությամբ

1. Եթե հավկիթը մնում է բաժակի հատակին՝ հորիզոնական դիրքով (պառկած է կողքի վրա), ապա այն թարմ է: Այդպիսի հավկիթը կարելի է օգտագործել մանկական կամ դիետիկ սննդում:

2. Եթե հավկիթը բաժակի հատակին է, բայց բութ ծայրը որոշակի անկյան տակ թեքված է դեպի վեր (ուղղահայաց դիրք դեռ չի ընդունել), ապա այն մեկ շաբաթվա թարմություն ունի:

3. Եթե հավկիթը բաժակի հատակին է, բայց բութ ծայրով ուղղված է վերև, ապա այն 2-3 շաբաթվա արտադրության է, ուստի հարկավոր է հնարավորինս շուտ սպառել, այն էլ՝ միայն եփած վիճակում: Այդպիսի հավկիթը չի կարելի հում վիճակում ուտել:

4. Եթե հավկիթը հայտնվում է ջրի երեսին, ապա առանց երկմտելու դեն նետե՛ք այն, քանի որ այն բավական հին է: Այս թեստը հավաստի է, քանի որ հավկիթի կեղևը ծակոտկեն ծածկույթ ունի, և որքան հին է հավկիթը, այնքան շատ օդ է ներթափանցում դրա միջով, և օդի կուտակման դեպքում հավկիթը սկսում է լողալ ջրի երեսին:



Թարմ 1 շաբաթվա 2-3 շաբաթվա 5-6 շաբաթվա

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է Ավստրիայի արտաքին գործերի նախարարության համագործակցության զարգացման ակումբ 0.7 %-ի աջակցությամբ՝ «Սոցիալական ձեռներեցության զարգացում փոքր թռչնաբուծական տնտեսությունների համար Ոսկեվան համայնքում» ծրագրի շրջանակում:

RURAL SUSTAINABLE DEVELOPMENT
AGRICULTURAL FOUNDATION

«Գյուղի կայուն զարգացում»
գյուղատնտեսական հիմնադրամ,

ՀՀ, ք. Երևան
16 թաղամաս, 44 շենք, 48 բն.

Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ http://www.ruraldaf.am